ՏԱԳՆԱՊԱԼԻ ԻՐԱՎԻՃԱԿ. Վերահաս ցեղասպանություն

Ատելության խոսքը և Ալիևի ռեժիմը, որը սերմանում է ատելություն, հրահրում բռնություն և էթնիկ զտումներ՝ խախտելով Արդարադատության միջազգային դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի՝ միջանկյալ միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումները (2023 թվականի ապրիլի դրությամբ)

Կոնտակտային անձ՝ Լիլիթ Հարությունյան
info@cftjustice.org
2100 Մոնթրոսի պող. #715, Մոնթրոս, Կալիֆորնիա 91020

Ճշմարտության և արդարադատության կենտրոնը (ՃԱԿ) 501(c)(3) գրանցված կորպորացիա է:
ԱՄՆ դաշնային հարկ վճարողի հաշվառման համար՝ 87-1681664

www.CFTJustice.org

@CFTJustice @CFTJustice @CFTJustice

Բովանդակություն

Զեկույցի նպատակաուղղվածությունը 3
Ներածություն 4
Արդարադատության միջազգային դատարան. միջանկյալ միջոցներ կիրառելու վերաբերյալ 2021թ. դեկտեմբերի 7-ի որոշում 4
Ընդհանուր տեղեկություններ. Պետության կողմից հովանավորվող ատելության խոսքն Ադրբեջանում 5
Նախագահ Ալիևի դերը Ադրբեջանում պետականորեն հովանավորվող ատելության խոսքում 8
Երեխաների մեջ ատելություն սերմանելը 12
Սոցիալական ցանցերը և պետության կողմից հովանավորվող, բռնությունն արդարացնող ատելության խոսքի տարածումը 13
Ատելության խոսքի հումանիտար և աշխարհագրական հետևանքները, ինչպես նաև դրա հնարավոր հետևանքները խաղաղության հաստատման հետագա ջանքերի համար 18
Եզրակացություն. ՏԱԳՆԱՊԱԼԻ ԻՐԱՎԻՃԱԿ 24
Հավելված 26

Զեկույցի նպատակաուղղվածությունը

Սույն զեկույցում ներկայացված են Ալիևի վարչակազմի կողմից Արդարադատության միջազգային դատարանի (ԱՄԴ) 2021 թվականի դեկտեմբերի 7-ի՝ միջանկյալ միջոցներ կիրառելու որոշումների խախտումները, որոնք վերաբերում են հայերի նկատմամբ ատելության սերմանմանը՝ որպես հետագայում ռազմական գործողություններ, էթնիկ զտումներ և պատերազմ հրահրելու միջոց: Զեկույցում ներկայացված են նախագահ Իլհամ Ալիևի և Ադրբեջանի կառավարության մյուս անդամների փաստացի հայտարարությունների օրինակներ, թե ինչպես են երեխաներին դպրոցում սովորեցնում ատել հայերին, ինչպես նաև Ադրբեջանի կառավարության հակահայկական քարոզչամեքենան, որը ԶԼՄ-ներում և սոցիալական ցանցերի միջոցով քարոզում է ատելություն և նպաստում էթնիկ զտումներին: Թեև հնարավոր չէ ֆիքսել Իլհամ Ալիևի և Ադրբեջանի ղեկավարության տարբեր պաշտոնյաների բոլոր ելույթները, այնուամենայնիվ, այս զեկույցը լուսաբանում է Իլհամ Ալիևի և կառավարության պաշտոնյաների կողմից արված որոշ առանցքային հայտարարություններ:

Այս զեկույցի նպատակն է ներկայացնել Ալիևի ռեժիմի՝ էթնիկ զտումների քաղաքականության և Հայաստանի ու հայերի նկատմամբ ագրեսիվ քաղաքականության վերաբերյալ փաստական ապացույցներ: Բոլոր ցուցանիշները վկայում են մեկ ուղղության մասին՝ հայերի վերահաս ցեղասպանությունը Լեռնային Ղարաբաղում: Մինչև չսանձվի Ալիևի վարչակազմի քաղաքականությունը, Ադրբեջանի նկատմամբ ակտիվ պատժամիջոցներ չկիրառվեն, և չկիրառվի Մարդասիրական օգնության միջանցքի մասին օրենքը[1], ապա հայ ժողովուրդը Լեռնային Ղարաբաղում, որը Լաչինի միջանցքի շրջափակման[2] պատճառով այժմ վերածվել է բաց բանտի, կշարունակի մնալ ծանր ֆիզիկական վտանգի տակ, իսկ Հայաստանի ինքնիշխանությունը՝ վտանգված:

Սույն զեկույցը նախազգուշացնում է միջազգային հանրությանը, մասնավորապես՝ Եվրոպական միությանը և ԱՄՆ-ին: Իլհամ Ալիևի և նրա վարչակազմի կողմից ատելություն սերմանող բոլոր արտահայտությունները երկու նպատակ ունեն՝ բռնի ուժով, սովամահության հասցնելով կամ սպանությունների միջոցով վտարել բոլոր հայերին Լեռնային Ղարաբաղից, և Հայաստանի Հանրապետության դեմ պատերազմի և բռնության միջոցով երկրի տարածք ներխուժել և գրավել այն:

---

[1] *S.230՝ Մարդասիրական օգնության միջանցքի մասին օրենք* (ներդրվել է 01/13/1995թ.), Կոնգրես https://www.congress.gov/bill/104th-congress/senate-bill/230?s=1&r=38

[2] *Ադրբեջան. Լաչինի միջանցքի շրջափակումը, որը հազարավոր կյանքեր վտանգի տակ է դնում, պետք է անհապաղ վերացվի:* Amnesty (9 փետրվարի 2023թ.) https://www.amnesty.org/en/latest/news/2023/02/azerbaijan-blockade-of-lachin-corridor-putting-thousands-of-lives-in-peril-must-be-immediately-lifted/.

Ներածություն

2021 թվականի դեկտեմբերի 7-ին ԱՄԴ-ն կայացրել է «*Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի*» գործով միջանկյալ միջոցներ կիրառելու իր որոշումները՝ փորձելով «կանխել ռասայական ատելության և խտրականության հրահրումն ու խթանումը, այդ թվում՝ իր պաշտոնյաների և պետական կառույցների կողմից, որոնք ուղղված են ազգությամբ կամ էթնիկ հայերի դեմ»[3]: Այդ ժամանակից ի վեր, սակայն, Ադրբեջանի ատելության խոսքի քաղաքականությունը շարունակվել է՝ խախտելով ԱՄԴ-ի որոշումը: Նրա՝ պետության կողմից հովանավորվող ատելության հռետորաբանությունը շարունակում է սևացնել հայերին՝ նրանց բնութագրելով որպես ի սկզբանե չարամիտ, անազնիվ և սպառնալիք հանդիսացող: Գիտնականներն ուսումնասիրել են, թե ինչպես վտանգավոր խոսքը կարող է նպաստել, որ զանգվածային վայրագություններն ու ցեղասպանությունը թվան թույլատրելի և անհրաժեշտ՝ անարգելով և սևացնելով (սատանայացնելով) էթնիկ ռասային՝ նրան վերագրելով ենթադրյալ հանցագործությունների մեղքը և ներկայացնելով որպես ապագա սպառնալիք, որի նպատակն է ձևավորել նորմատիվ համոզմունք, որ բռնությունն անխուսափելի է[4]: Ինչպես փաստում է այս զեկույցը, Ադրբեջանի ատելության քաղաքականությունը հայերին դարձնում է անմարդկային՝ նրանց համեմատելով շների կամ մակաբույծների հետ[5], սուտ մեղադրելով Հայաստանին ներկայիս իրադարձությունների համար և հետագա սպառնալիքներ ստեղծելով՝ Հայաստանը ներկայացնելով որպես սպառնալիք իր, իր հարևանների, տարածաշրջանի և աշխարհի համար: Ահա այսպես է Ալիևի ռեժիմն արդարացնում հայերի նկատմամբ բռնություն գործադրելու, ռազմագերիներին խոշտանգելու, մարմինները խեղելու, սոցցանցերում զարհուրելի ոճրագործություններ հրապարակելու, ինչպես նաև հայերին և Հայաստանը վատաբանողներին պարգևատրելու սեփական քաղաքականությունը:

Արդարադատության միջազգային դատարան. միջանկյալ միջոցներ կիրառելու վերաբերյալ 2021թ. դեկտեմբերի 7-ի որոշում

«Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործով 2021 թվականի դեկտեմբերի 7-ին Միջազգային դատարանը հրապարակել է իր «Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի» գործով միջանկյալ երեք միջոցները: Պարտադիր ուժ ունեցող որոշման մեջ Դատարանը նշել է հետևյալ միջանկյալ միջոցները[6].

---

[3] Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կիրառում (Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի), միջանկյալ միջոցներ կիրառելու պահանջ, 2023, ԱՄԴ No. 180, ¶ 10 (փետրվարի 22)

[4] Ջոնաթան Լիդեր Մեյնարդ և Սյուզան Բենեշ «Վտանգավոր խոսք և վտանգավոր գաղափարախոսություն. Մոնիթորինգի և կանխարգելման համապարփակ մոդել» *Ցեղասպանության ուսումնասիրություն և կանխարգելում* 9.3 (2016թ)

[5] Լյուսիա դե լա Տոռ (12 հունվարի 2021թ): *Ադրբեջանական նամականիշները մեղադրվում են հակահայկական քարոզչություն տարածելու մեջ:* The Calvert Journal, Նամականիշներ, որոնց վրա պատկերված են միջատների պես հայերի բնաջնջումը

[6] Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կիրառում (Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի), միջանկյալ միջոցներ, 2021թ. դեկտեմբերի 7-ի որոշում, ԱՄԴ 2021թ. զեկույցներ, էջ 361

«(1) Ադրբեջանի Հանրապետությունը «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունների համաձայն պարտավոր է.

ա) բռնությունից և մարմնական վնասվածքներից պաշտպանել 2020 թվականի զինված հակամարտության հետևանքով գերեվարված բոլոր անձանց, ովքեր շարունակում են մնալ կալանքի տակ, և ապահովել նրանց անվտանգությունն ու օրենքի առջև հավասարությունը,

(բ) «Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու ազգությամբ և էթնիկ հայերին թիրախավորող ռասայական ատելության և խտրականության հրահրումը և խթանումը, ներառյալ՝ Ադրբեջանի պաշտոնյաների և պետական հաստատությունների կողմից»,

(գ) «Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու և պատժելու վանդալիզմի ու պղծման գործողությունները՝ ուղղված հայկական մշակութային ժառանգության, ներառյալ՝ եկեղեցիների և այլ պաշտամունքի վայրերի, հուշարձանների, տեսարժան վայրերի, գերեզմանատների և արտեֆակտերի դեմ»:

(2) Երկու Կողմերը պետք է ձեռնպահ մնան ցանկացած գործողությունից, որը կարող է սրել կամ ձգձգել դատարանի կողմից քննվող վեճը կամ դժվարացնել դրա լուծումը»:

2023 թվականի փետրվարի 22-ին, ի պատասխան Լաչինի միջանցքի շարունակվող շրջափակմանը, ԱՄԴ-ն հրապարակել է պարտադիր ուժ ունեցող ևս մեկ միջանկյալ միջոց:

«Ադրբեջանի Հանրապետությունը պարտավոր է, մինչև այդ գործով վերջնական որոշման կայացումը և «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունների համաձայն ձեռնարկել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները՝ ապահովելու մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների անարգել տեղաշարժը Լաչինի միջանցքով երկու ուղղությամբ»:

Այս փաստաթղթում հիմնական շեշտը դրվելու է 1(բ) միջանկյալ միջոցի վրա, որը նպատակ ունի կանխել հայերի նկատմամբ ռասայական ատելության հրահրումը: Այս զեկույցում հատկապես կնշվի, թե ինչպես է Ալիևի ռեժիմը խախտում Դատարանի որոշումը և շարունակում լարվածություն և բռնություն հրահրել:

Ընդհանուր տեղեկություններ. Պետության կողմից հովանավորվող ատելության

խոսքն Ադրբեջանում

Ադրբեջանում հայերի նկատմամբ պետության կողմից հովանավորվող ատելության խոսքը մշտապես քարոզվում է երկրի ղեկավարության, մասնավորապես՝ նախագահ Իլհամ Ալիևի և նրա վարչակազմի կողմից: Ատելության խոսքի հիմնական աղբյուրը նախագահն է իր ելույթներում և ազգին ուղղված իր ուղերձներում կամ միջազգային հասարակական ֆորումներում: Նրա ուղերձը տարիներ շարունակ հստակ է. Հայաստանը ագրեսոր է, Հայաստանը թույլ է, հայերը ֆաշիստ են և ահաբեկիչ, ուստի Հայաստանի և հայերի դեմ բոլոր ռազմական գործողություններն արդարացվում են: 2016-ից 2020 թվականներն ընկած ժամանակահատվածում Իլհամ Ալիևի ելույթներում նրա ռեժիմը ստեղծել է «թշնամու կերպարը» Լեռնային Ղարաբաղի հակամարտության համատեքստում: Նրա ելույթների նարատիվի և դիսկուրսի վերլուծությունը բացահայտում է երեք հիմնական բաղադրիչ. 1) հայերին մեղադրել որպես երկրի խնդիրների միակ մեղավոր, 2) սևացնել հայերին՝ նրանց համարելով անմարդկային և բարբարոս, և 3) ընդգծել Ադրբեջանի առավելությունը՝ սպառնալիքի վերացումն արդարացնելու համար[7]:

Բոլորովին վերջերս՝ 2022 թվականի դեկտեմբերի 5-ին, «Արևմտյան Ադրբեջանը» ներկայացնող խմբի հետ հանդիպման ժամանակ[8] Իլհամ Ալիևը սկսեց Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ բացահայտ պահանջներ ներկայացնել: Իր ծննդյան 61-րդ տարեդարձի օրը՝ 2022 թվականի դեկտեմբերի 24-ին, ծավալուն իր ելույթի ժամանակ Իլհամ Ալիևը հայտարարեց. «[Հայաստանը] մեր պատմական հողն է, այն հաստատվում է բազմաթիվ պատմական փաստաթղթերով, պատմական քարտեզներով և մեր պատմությամբ»[9]: Այս կեղծ նարատիվներն ունեն երեք հիմնական նպատակ՝ միտումնավոր հրահրել էթնիկական լարվածություն, սևացնել Հայաստանը որպես փոքր ազգ և արդարացնել ռեժիմի վերջնական նպատակները, այն է՝ Լեռնային Ղարաբաղի տարածքում էթնիկ զտումներ և Հայաստանի Հանրապետության հավելյալ տարածքների գրավում:

2016 թվականին Ալիևը կոչ արեց ոչնչացնել Հայաստանի «գործող ռազմաքաղաքական ռեժիմը» և հայտարարեց, որ դա անելու համար Ադրբեջանը պետք է «օգտագործի իր բոլոր ռեսուրսները»: Նա հրապարակավ հայտնել է հայերի նկատմամբ ռազմական ճանապարհով «վերջնական և անդառնալի հաղթանակի» հասնելու իր ցանկությունը՝ հայտարարելով, որ «մենք կվերականգնենք մեր պատմական հողերը Լեռնային Ղարաբաղում»[10]: Կոնկրետ այս ելույթում Ալիևը նաև պահանջներ է ներկայացրել

---

[7] Նաիրա Սահակյան, *Թշնամանքի հռետորական դեմքը. Ղարաբաղյան հակամարտությունը և հայերին անմարդկային դարձնելը Իլհամ Ալիևի ելույթներում* (2022) https://www.tandfonline.com/doi/abs/10.1080/14683857.2022.2153402?journalCode=fbss20

[8] *Նախագահ Իլհամ Ալիև. Մենք պետք է նաև համատեղ ջանքերով աշխատենք Արևմտյան Ադրբեջան վերադառնալու հայեցակարգի վրա,* ԱզերԹաջ (24 դեկտեմբերի 2022թ.) https://azertag.az/xeber/Prezident_Ilham_Aliyev_Biz_birge_seylerle_Qerbi_Azerbaycana_Qayidis_Konsepsiyasini_da_islemeliyik-2423867

[9] *Ալիևն ասում է, որ Երևանը «պատմականորեն» ադրբեջանական է,* OC Media (25 դեկտեմբերի 2022թ.), https://oc-media.org/aliyev-says-yerevan-historically-azerbaijani/

[10] «Ասպարեզի» աշխատակազմ, *Հայաստանը կոչ է անում ճանաչել Արցախը, քանի որ Ալիևը կոչ է անում*

Հայաստանի քաղաքների, այդ թվում՝ մայրաքաղաք Երևանի նկատմամբ, որը երբեք չի գտնվել Ադրբեջանի վերահսկողության տակ:

Նախագահ Ալիևի և նրա ռեժիմի կեղծ նարատիվը սահմաններ չունի և կաշկանդված չէ որևէ միջազգային օրենքով, ներառյալ Արդարադատության միջազգային դատարանի վերջին վճիռներով: Փաստորեն, Ալիևի վարչակարգն իրեն քաջալերված է զգում, քանի որ նրա ատելության խոսքն ու հայերի նկատմամբ բռնության քարոզը որևէ հետևանք չեն ունեցել: Ավելի շուտ, Ադրբեջանի կառավարությունը սաստկացրել է հայատյացությանն ուղղված իր արշավը՝ օգտագործելով տարբեր ազգայնական նարատիվներ: Այս ուղերձները հայերին ներկայացնում են որպես երկրորդ կարգի կամ «այլ» ժողովուրդ, որոնք միայն ոչնչացման են արժանի:

Լրատվամիջոցներն ու կրթական համակարգն Ադրբեջանում նույնպես օգտագործվում են որպես զենք Ադրբեջանի կառավարության կողմից՝ այլատյաց և հակահայկական հաղորդագրություններ տարածելու համար: Սա ներառում է վախի մթնոլորտի ստեղծումը, հայերի՝ կովկասյան տարածաշրջանի բնիկ ժողովուրդ լինելու ժխտումը և հայերին տարածաշրջանի խնդիրների, այդ թվում՝ պատերազմի մեջ մեղադրելը:

Ալիևի վարչակարգն օգտագործում է հայերի նկատմամբ ատելության խոսքն ու ռասիզմը որպես միջոց՝ սերմանելու և օրինականացնելու ատելությունը հայկական ամեն ինչի նկատմամբ և մեղադրելու հայերին ադրբեջանական ռեժիմի կողմից հրահրված և իրականացվող բռնությունների մեջ: Ադրբեջանում Հայաստանի և հայերի դեմ պոպուլիստական զայրույթ բորբոքելով՝ այս ռազմավարությունը նպատակ ունի բաժանել հայերին և ադրբեջանցիներին, խաթարել խաղաղ գոյակցելու նրանց կարողությունը և առաջ մղել միակողմանի տեսլականը, թե ինչ է նշանակում լինել ադրբեջանցի, ըստ էության ատել և սպանել հայերին:

Ադրբեջանի կառավարության կողմից ատելության խոսքի այս կերպ օգտագործումը սկսվել է դեռևս 2004 թվականից: Այսօր այն օգտագործում է պետության կողմից հովանավորվող բոլոր լրատվամիջոցները, սոցիալական ցանցերը, համաժողովները, պատվիրակություններին, ելույթները և կրթական համակարգը մարդկային արժանապատվությունը նվաստացնող հաղորդագրություններ տարածելու, հայերին իրենց էթնիկական պատկանելության պատճառով սևացնելու, ինչպես նաև բռնություններն ու պատերազմն օրինականացնելու նպատակով վախի մթնոլորտ ստեղծելու համար: Լրատվամիջոցներում և հանրային դիսկուրսում նրանք օգտագործել են ատելության խոսքը հայերին որպես երկրորդ կարգի, շեղված կամ վտանգավոր ներկայացնելու համար: 2020 թվականի սեպտեմբերի 44-օրյա պատերազմի ընթացքում և դրանից հետո բռնությունները, արտադատական մահապատիժները, խոշտանգումները, բռնի տեղահանումները, բռնի անհետացումները, հայկական մշակութային հուշարձանների

«վերադարձնել» Երևանը, Մեղրին, Ասպարեզ (6 դեկտեմբերի 2016թ.) https://asbarez.com/armenia-urges-artsakh-recognition-as-aliyev-calls-for-reclaiming-yerevan-meghri/.

ոչնչացումը և հարձակումները Լեռնային Ղարաբաղում խաղաղ հայ բնակչության վրա արդարացնելու համար Ադրբեջանը շարունակում էր սուր քննադատությունը հայկական ամեն ինչի դեմ:

Նախագահ Ալիևի դերը Ադրբեջանում պետականորեն հովանավորվող ատելության խոսքում

Նախագահ Իլհամ Ալիևը մեծ դեր է խաղում հայերի նկատմամբ ռասայական ատելություն սերմանելու գործում: Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո՝ 2020 թվականի հոկտեմբերի 4-ին նախագահ Ալիևը հեռուստաուղերձում հայտարարեց. «Մենք քշում ենք նրանց շների պես: Ադրբեջանցի զինվորները նրանց քշում են շների պես»[11]: Իսլամական ավանդույթի համաձայն՝ շներն ինչ-որ անմաքուր բանի հետ են ասոցացվում[12]: Այս հատարարությունը երանգ է հաղորդել նախագահ Ալիևի՝ հայերի նկատմամբ ատելություն սերմանելուն ուղղված ռասիստական հայտարարություններին և այն շարունակվում է այսօր՝ չնայած խաղաղության հաստատմանն ուղղված ջանքերին, ինչպիսիք են Արդարադատության միջազգային դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 7-ի՝ միջանկյալ միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումը:

Դեռևս 2022 թվականի հունվարի 30-ին, ԱՄԴ-ի՝ միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ որոշումից երկու ամիս չանցած, նախագահ Ալիևը Ադրբեջանի «ԱզերԹաջ» պետական լրատվական գործակալությանը տված հարցազրույցի շրջանակներում արել էր հետևյալ հայտարարությունները.

> «Մենք երբեք չպետք է մոռանանք հայկական դաժանությունն ու ֆաշիզմը… Մենք հաղթել ենք հայկական ֆաշիզմին: Պետք է այնպես անենք, որ հայկական ֆաշիզմն այլևս երբեք գլուխ չբարձրացնի:
>
> Նախորդ տարիներին իմ ելույթներում բազմիցս եմ բարձրացրել հայ ֆաշիստների հարցը: Այս հարցը ես բարձրացրել եմ միջազգային կազմակերպությունների և երկրների առջև և ասել, որ նացիստներին չպետք է թույլ տալ հերոսանալ…
>
> Սա ցույց է տալիս, որ հայկական ֆաշիզմը դեռևս գոյատևում է: Այո, մենք հաղթեցինք հայկական ֆաշիզմին ղարաբաղյան երկրորդ պատերազմում, Հայրենական պատերազմում: Կարող եմ ասել, որ հայ ֆաշիստներն այժմ այնքան ակտիվ չեն, որքան նախորդ տարիներին: Սակայն տեսնում ենք, որ ֆաշիզմը Հայաստանում վերելք է ապրում: Հայաստանի նախկին ֆաշիստ

[11] *Նախագահ Ալիև. Ադրբեջանցի զինվորները քշում են նրանց շների պես*: Defence.az (4 հոկտեմբերի 2020թ.) https://defence.az/en/news/146240/president-aliyev-azerbaijani-soldiers-drive-them-away-like-dogs.

[12] Իրավունքի և արդարության կենտրոն «Թաթոյան հիմնադրամ» «*Ադրբեջանական շարունակվող ատելության քաղաքականությունը հայերի նկատմամբ. պետության կողմից հովանավորվող վայրագությունների մոդիֆիկացիան* 9 (2022թ)

> առաջնորդներ, մանկասպաններ Սարգսյանն ու Քոչարյանը ընդվզում են և կրկին փորձում են մարտահրավեր նետել մեզ: Մենք հաղթել ենք նրանց: Մենք նրանց ծնկի բերեցինք: Նրանք պատմության մեջ կմնան որպես դասալիքներ:
>
> Մենք հաղթել ենք հայկական ֆաշիզմին, բայց դա դեռ վերջը չէ: Մենք շարունակելու ենք փորձել արմատախիլ անել հայկական ֆաշիզմի բոլոր դրսևորումները, և մենք ի վիճակի ենք դա անել: Մենք ոչ միայն ազատագրել ենք մեր հողերը, այլև մաքրել ենք տարածաշրջանը՝ Հարավային Կովկասն այդ վայրենի ուժերից: Կրկնում եմ, որ նրանք հիմա նվաստացած վիճակում են, բայց ոչ ոք չի կարող երաշխավորել, որ նորից չեն ըմբոստանա: Երբեք թույլ չենք տա, որ հայկական ֆաշիզմը վեր բարձրանա մեր տարածաշրջանում: Երբեք չենք կարող թույլ տալ Հայաստանին կրկին պոտենցիալ սպառնալիք դառնալ Ադրբեջանի համար: Եթե նկատենք դա, ապա տեղում կոչնչացնենք»[13]:

ԱզերԹաջ-ին տված այս հարցազրույցում նախագահ Ալիևը ոչ միայն բացարձակապես անտեսում է ԱՄԴ-ի՝ միջանկյալ միջոց կիրառելու որոշումը, այլ նաև կոնկրետ կոչ է անում միջազգային հանրությանը միանալ իրեն՝ հայերի նկատմամբ ատելություն սերմանելու և բռնությունը փառաբանելու իր առաքելությանը: Հակամարտության մեջ հայկական կողմին անվանելով «ֆաշիստ» և «վայրենի»՝ Ալիևը փորձում է Հայաստանի վրա Ադրբեջանի հարձակումները ներկայացնել որպես արդարացված և անհրաժեշտ և հպարտությամբ աջակցում է հայերի էթնիկ զտումներին: Հատկանշական է, որ նա նաև օգտագործում է Խորհրդային Միության և Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմական հիշողությունը՝ Հայաստանին որպես «ֆաշիստ» և «վայրենի» կերպար ներկայացնելը հիմնավորելու համար: Հայ ժողովրդին, հայկական հողը և հուշարձանները բնութագրելով որպես ֆաշիստական՝ Ալիևը արդարացնում է ինչպես անցյալ, այնպես էլ ապագա հարձակումները, ներառյալ հայկական տարածքների օկուպացումը և հայկական հուշարձանների ոչնչացումը, ինչը Արդարադատության միջազգային դատարանի որոշման 1 (գ) միջանկյալ միջոցի ուղղակի խախտում է:

2022 թվականի ապրիլին նախագահ Ալիևը վերահաստատեց Հայաստանի վերաբերյալ իր դիրքորոշումը՝ մեղադրելով նրանց «պետական դավաճանության» և «օկուպացիայի» մեջ և կոչ անելով վտարել նրանց, ըստ իրեն, «պատմականորեն ադրբեջանական տարածքներից»: Նա հայտարարեց, որ Հայաստանին և «հայերի կողմից օկուպացիային» աջակցողները «ադրբեջանական ժողովրդի թշնամիներն են» և պետք է պատասխանատվության ենթարկվեն:

2022 թվականի օգոստոսի 12-ին Իլհամ Ալիևը երկար բարոգչական հայտարարությամբ հանդես եկավ AzTV-ով[14]: Նա հայտարարեց.

---

[13] Նախագահ Ալիևը հարցազրույց է տվել AZERTAC VIDEO-ին, Azertac (հունվարի 31), https://azertag.az/en/xeber/1994012

[14] Ադրբեջանի նախագահ, YouTube (12 օգոստոսի 2022թ.), *İlham Əliyevin Azərbaycan Televiziyasına müsahibəsi, https://www.youtube.com/watch?v=4gkIv5hSCCM, https://www.dropbox.com/sh/r5irjdux9am84z0/AAAPx-*

«Հայաստանի և Ադրբեջանի միջև հարաբերությունների կարգավորման գործընթացում այսօր Ղարաբաղի հարց չկա: Նման փորձեր եղել են, բայց ես դրան երբեք չեմ համաձայնել: Ի՞նչ կապ ունի դրա հետ Հայաստանը: Դա մեր ներքին գործն է»:

«Ղարաբաղում ապրող հայերը պետք է ճիշտ քայլ անեն: Նրանք պետք է հասկանան, որ իրենց ապագան կախված է միայն ադրբեջանական հասարակությանն ինտեգրվելուց: Այլ կերպ լինել չի կարող: Նկատի ունեմ, սա է իրականությունը»:

«Եթե ինչ-որ մեկը Ղարաբաղում հանուն պոպուլիզմի կամ, ինչ-որ մեկից վախենալով, պնդում է ինչ-որ կարգավիճակի կամ անկախության մասին, ապա պետք է իմանաք, որ նա հայ ժողովրդի առաջին թշնամին է. քանի որ Ղարաբաղում ապրող հայերը չեն ունենալու ո՛չ կարգավիճակ, ո՛չ անկախություն և ո՛չ էլ արտոնություններ: Ինչպես Ադրբեջանի քաղաքացիները, այնպես էլ նրանք: Նրանց իրավունքները պաշտպանվելու են այնպես, ինչպես Ադրբեջանի քաղաքացիների, Ադրբեջանում ապրող մյուս ժողովուրդների իրավունքները: Սա է միակ ճանապարհը»:

«Իսկ Հայաստանը պարզապես դեռ զբաղված է խռովության կոչերով: Նրանք պետք է հասկանան, որ հետաձգելն իրենց օգուտ չի բերի: Եթե նրանք կարծում են, որ մեկ կամ մեկուկես տարի հետո ինչ-որ բան կփոխվի իրենց օգտին, ապա սխալվում են: Ինչ-որ բան կարող է փոխվել, բայց՝ մեր օգտին»:

«Որովհետև աշխարհաքաղաքական իրավիճակն աշխարհում և տարածաշրջանում ակնհայտ է: Պարտադիր չէ լինել մեծ քաղաքական գործիչ, որպեսզի բոլորը կարողանան տեսնել դա. Ադրբեջանի աճող հզորությունը՝ թե՛ ռազմական, թե՛ տնտեսական, թե՛ քաղաքական հզորությունը, Հայաստանի փաստացի մեկուսացումը…

… եթե կարելի է այդպես ասել: Ինչու՞ մեկուսացում: Որովհետև նրանք սխալ են: Սխալ են անում»:

«Սակայն ես նրանց այդ մասին ասել եմ ուղիղ, պաշտոնապես. «Հանեք ձեր գլխից տարածքային պահանջները»: Ասել եմ, եթե չհրաժարվեք դրանից, ապա մենք կարող ենք տարածքային պահանջներ ներկայացնել նաև Հայաստանին»:

«Ղարաբաղում ապրող հայերը նույնպես տեսան, որ Ադրբեջանից միայն լավը կարող է գալ իրենց: Ես ապագայի նկատմամբ լավատես եմ: Մենք միշտ հասնում ենք մեր ուզածին»:

---

w6gsVdXsgCwRNOvUNVa?dl=0.

«Վրեժ» օպերացիան ևս մեկ անգամ ցույց տվեց Հայաստանին, որ ոչ ոք և ոչինչ չի կարող մեզ կանգնեցնել. ո՛չ ինչ-որ մեկի հայտարարությունը, ո՛չ ինչ-որ մեկի հորդորը, ո՛չ էլ ինչ-որ հեռախոսազանգ: Ոչինչ և ոչ ոք: Ադրբեջանի ժողովուրդը դա լավ գիտի: Ղարաբաղյան երկրորդ պատերազմը դա ցույց տվեց»:
«Վստահ եմ, որ մյուս կողմը [Հայաստանը] նույնպես դա գիտի: Նա երբեմն մոռանում է: Ահա թե ինչու են տեղի ունենում այս ողբերգական իրադարձությունները: Ինչու՞ պետք է մեր երեխաները զոհվեն պատերազմից հետո: Ինչու՞ պետք է սպանվեն հայերի ձեռքով: Մենք դա թույլ տալ չենք կարող»:

«Ուզում եմ ևս մեկ անգամ նշել, որ եթե նման սադրանք նորից կրկնվի, ապա արձագանքն ավելի կոշտ կլինի, նրանք ավելի կզղջան, ավելի բարձր օգնություն կկանչեն: Բայց նորից եմ ասում, որ մենք մտադիր չենք նոր պատերազմ սկսել: Բավական է: Մենք հասել ենք մեր ուզածին»:

«Միգուցե դա է պատճառը, որ մենք այնտեղից լսում ենք, որ մեկը կամ երկուսն ասում են. «Ես չեմ հեռանա»: Իրենց գործն է: Նրանք պատերազմական հանցագործներ են: Թող այլևս չփորձեն մեր համբերությունը: Թող հեռանան, ինչպես ուզում են: Մեզ չի հետաքրքրում, թե հետո ուր են գնալու»:

Հայտարարելով, որ Ադրբեջանի կառավարության համար միևնույն է, թե ուր են գնալու Լեռնային Ղարաբաղի հայերը, Ալիևը հստակ հասկացրել է, որ իր իրական նպատակը էթնիկ զտումն է: Այդ սպառնալից հայտարարություններն արդարացնելու համար նա կիրառում է Հայաստանը որպես խռովարար կողմ, իսկ Ադրբեջանը՝ որպես խաղաղասեր ու հերոսական երկիր ներկայացնելու ռազմավարություն: Ալիևը հստակ հասկացրել է, որ եթե հայերը չենթարկվեն Ադրբեջանի կանոններին, ապա Հայաստանի Հանրապետությունը կկանգնի է Ադրբեջանի կողմից բռնության վտանգի տակ: Անհրաժեշտ է նշել, որ այս հայտարարությունից հետո մեկ ամսվա ընթացքում Ադրբեջանը հարձակվել և ներխուժել է Հայաստան և այսօր էլ շարունակում է օկուպացնել Հայաստանի հարավային սահմանների մի մասը[15]:

2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի զինված ուժերը հրետանային միջոցներից և խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից սկսել են ինտենսիվ կրակ վարել և թիրախավորել Հայաստանի Հանրապետության սահմաններում խաղաղ բնակչությամբ բնակեցված Գորիս, Սոթք և Ջերմուկ քաղաքները[16]: Հարձակումների սկզբում նախագահ Ալիևը Telegram-ում գրառում է կատարել, որում ասվում է.

«Սովորեք գլխով մտածել: Մենք այստեղ ենք: Ոչ մի տեղ չենք գնացել: Մի՛

[15] Սիմոն Մաղաքյան, *ԱՄՆ-ը կարող է անսպասելի որոշիչ գործոն դառնալ Հայաստանի ապագայի համար:* TIME (6 հոկտեմբերի 2022թ.), https://time.com/6219263/armenia-azerbaijan-us-involvement/
[16] *Հաղորդագրություն, ՀՀ պաշտպանության նախարարություն* (13 սեպտեմբերի 2022թ.), https://www.mil.am/en/news/11007

բարկացրեք մեզ: Ձեզ լավ պահեք: Եթե ձեզ լավ պահեք, ապա կարող եք խաղաղ ապրել: Եթե մեր դեմ կրկին որևէ սադրանք կատարեք, ապա ձեր գլուխը կկոտրենք: Անկախ նրանից, թե ով է: Ոչ ոք ձեզ չի օգնի»[17]:

Նման շարունակական հայտարարություններով նախագահ Ալիևը, միևնույն ժամանակ, վախ և ատելություն է սերմանում, քանի որ Ադրբեջանի կողմից հայերի նկատմամբ սպանությունները և անմարդկային վերաբերմունքը խրախուսվում և պարգևատրվում են: 2022 թվականի օգոստոսին Ալիևը «Ադրբեջանի Հանրապետության սահմանները պաշտպանելու» համար պարգևատրել էր Քարդաշխան Աբիշովին, ով 2020 թվականին Ղարաբաղյան երկրորդ պատերազմից հետո քննության էր ենթարկվել հայ զինվորների նկատմամբ անմարդկային վերաբերմունքի և հայ կին զինծառայողի մարմնի խեղման տեսանյութը համացանցում տարածելու համար[18]: 2023 թվականի հունվարին նախագահ Ալիևը կրկին խոսեց հայերին «ադրբեջանական տարածքներից» վտարելու մասին՝ մեղադրելով նրանց «էթնիկ զտումներ» իրականացնելու և «պատերազմական հանցագործություններ» կատարելու մեջ: Նա պնդում էր, որ հայերն են «պատերազմի պատճառը» և հայտարարեց, որ ադրբեջանցիները պետք է «պաշտպանեն իրենց հողերի նկատմամբ իրենց իրավունքը»: Նա տարածաշրջան մտնել փորձող հայերին անվանել էր «զավթիչներ» և հաստատել իր աջակցությունը Ադրբեջանի սահմանների պաշտպանության համար «բոլոր անհրաժեշտ դիվանագիտական և ռազմական միջոցների» ձեռնարկմանը: Նախագահ Ալիևը պատասխանատու է ուղիղ ռասիստական մեկնաբանությունների, այդ թվում՝ «ֆաշիստ» և «վայրենի» պիտակավորելու միջոցով Ադրբեջանում հայերի նկատմամբ ռասայական ատելության խթանման, ինչպես նաև բռնությունների, սպանությունների և անմարդկային վերաբերմունքի խրախուսման համար:

Երեխաների մեջ ատելություն սերմանելը

Ադրբեջանի ուսումնական հաստատություններում սովորեցնում են հայատյացություն, որը հովանավորվում է պետության կողմից: Ադրբեջանցի երեխաներին սովորեցնում են ատել հայերին դեռ փոքր տարիքից՝ հինգ տարեկանից: 2023 թվականի փետրվարին Հադրութի մանկապարտեզում, որը ներկայումս օկուպացված է Ադրբեջանի կողմից, անցկացվել է «Խոջալուն երեխաների աչքերով» խորագրով միջոցառում[19]: Միջոցառման շրջանակներում հինգ տարեկան երեխաները զինվորական համազգեստով էին: Նման խրատը ցույց է տալիս, թե ինչպես է Ադրբեջանը պատմական լարվածությունը տեղափոխում ապագա, երբ երեխաների այսօրվա սերունդը մեծանում է՝ տեղեկանալով Հայաստանի և Ադրբեջանի միջև հակամարտության անցյալի իրադարձությունների պատճառով առաջացած

[17] @MaidenTower, Telegram (13 սեպտ. 2022թ.), https://t.me/MaidenTower/27716, https://www.dropbox.com/sh/9clm8mdh3bwzxdl/AABHJ8U19AFOUxEv6DkhQNYUa?dl=0
[18] Անի Ավետիսյան «*Ալիևը օգոստոսին պարգևատրել է զոհված հայ զինծառայողի մարմինը խոշտանգողին*» Փաստերի ստուգման հարթակ (19 սեպտեմբերի 2022թ.), https://fip.am/en/20460?doing_wp_cron=1677797975.9089000225067138671875
[19] @theusarmenias, Instagram (24 փետր. 2023թ), https://www.instagram.com/p/CpDJEAvKP8j/ https://www.dropbox.com/sh/r3bdvyr2fo0m7ia/AAAkfuAeuU_9sHW3uwEsuA5Ja?dl=0.

լարվածության ու ատելության մասին:

2022 թվականի սեպտեմբերի 23-ին սոցիալական ցանցերում տարածվեց մի տեսանյութ, որտեղ ադրբեջանցի երեխաներին սովորեցնում են կրկնել ադրբեջանական հայտնի հակահայկական կարգախոսը՝ «Ծառայել հայրենիքին: Հավատարմություն ժողովրդին: Մահ, մահ, մահ թշնամուն»[20]: Նմանապես, մեկ այլ տեսանյութում երևում է, թե ինչպես է ադրբեջանցի երեխաների խումբը պարում գրատախտակի մոտ, որի վրա գրված է «Ղարաբաղը Ադրբեջան է»[21]:

Երեխաների մեջ ատելության սերմանումը տեղի է ունենում գրականության միջոցով: Բահրիմ Բարիզադեն գրել է. «Իրևանը երեխաների համար» և «Ադրբեջանի զինված ուժերը. Երեխաների համար»[22]: Գրքերը կարելի է ձեռք բերել Ադրբեջանի կողմից ֆինանսավորվող Բաքվի գրքի կենտրոնից: «Իրևան» նշանակում է Հայաստանի մայրաքաղաք Երևանը: Այս կերպ Բարիզադեն երեխաներին սովորեցնում է հավատալ, որ Իրևանը Ադրբեջանի հնագույն քաղաք է, հետևաբար, այն տարածք է, որը պետք է հետ վերադարձնել: Նմանատիպ գրքերից բացի, որոնք հատուկ ստեղծված են ադրբեջանցի երեխաներին պատմական պահանջներ, ռազմական սովորույթներ և հայերի նկատմամբ ռասայական ատելություն սովորեցնելու համար: Կան նաև վկայություններ ադրբեջանական դպրոցներում օգտագործվող գրքերում ռասայական ատելության տարածվածության մասին: 2022 թվականի հունվարի 28-ին մի թվիթ էր հայտնվել ադրբեջանական դասագրքի մասին, որտեղ հայը հրամայում է ադրբեջանցի մորը սպանել իր որդուն, բայց փոխարենը ադրբեջանցի մայրը սպանում է հային[23]: Նմանապես, թեև հրատարակման և տեղադրման ժամկետներն անհայտ են, Ադրբեջանում կա ևս մեկ դպրոցական դասագիրք, որում ադրբեջանցի աղջիկը կացնով հարվածով սպանում է հայ զինվորին: Երեխաների համար նախատեսված գրքերն ու ռազմական միջոցառումները կարևորագույն դեր են խաղում երեխաների մեջ հայատյացություն սերմանելու գործում: Այս կերպ ռասայական ատելությունը գալիք սերունդների համար դառնում է Ադրբեջանի ազգային գաղափարախոսության անբաժանելի մասը՝ պետության կողմից հովանավորվող ատելության խոսքը դարձնելով հսկայական խոչընդոտ խաղաղության ճանապարհին:

Սոցիալական ցանցերը և պետության կողմից հովանավորվող, բռնությունն արդարացնող ատելության խոսքի տարածումը

---

[20] @theusarmenias, Instagram (23 սեպտեմբերի 2022թ.), https://www.instagram.com/reel/Ci4E9UMK_RN/?igshid=YmMyMTA2M2Y%3D https://www.dropbox.com/sh/uobtb3o9titfkic/AADvnP_vfyRo8JKFd49sK-n2a?dl=0.

[21] @super_armenia, Instagram (20 սեպտ. 2022թ.), https://www.instagram.com/reel/CiuNL6Ko0Qb/?igshid=YmMyMTA2M2Y%3D.

[22] Azərbaycan silahlı güvvələri, Բաքվի գրքի կենտրոն, https://bakubookcenter.az/en/product/55593: https://www.dropbox.com/sh/cvhjvqfe7n4ud1f/AADokOKNZA3PzLM3HXmJi0zca?dl=0.

[23] @arzudreamwish, Twitter (29 հունվարի 2022թ.), https://twitter.com/arzudreamwish/status/1487114651796230146?s=21: https://www.dropbox.com/sh/bflh3iq8rxnmwau/AAAIdu4zKJeVVAh1YUYM02Cxa?dl=0.

Սոցիալական ցանցերը, հատկապես Telegram-ը, դարձել է հայերի դեմ ուղղված ռասայական ատելության տարածման աղբյուր: Telegram-ի օգտագործումը մեծացել է 2020թ. Ղարաբաղյան երկրորդ պատերազմի ժամանակ[24]:
Երբ 2022 թվականի սեպտեմբերի 13-ին Ադրբեջանի զինված ուժերը հրետանային միջոցներից և խոշոր տրամաչափի հրաձգային զինատեսակներից սկսեցին գնդակոծությունը՝ թիրախավորելով Հայաստանի Գորիս, Սոթք և Ջերմուկ քաղաքները[25], այս հարթակը կրկին օգտագործվեց վայրագությունների մասին սարսափելի տեղեկատվական նյութեր տարածելու համար, օրինակ՝ հայերի արտադատական մահապատիժները ծաղրող տեսանյութերը, հաճախ ռասիստական վերնագրերով:

Տելեգրամյան մի հրապարակման մեջ, թե ինչպես է ադրբեջանցի զինվորը բարձրացնում ադրբեջանական դրոշը, այնուհետև ներկայացվում է բազմաթիվ սպանությունների տեսագրությունը[26]: Տելեգրամյան մեկ այլ հրապարակման մեջ ներկայացվում է սպանված հայ զինվորի տեսանյութ, որի տակ հնչում է տոնական երաժշտություն[27]:

2022թ. սեպտեմբերի 19-ին հրապարակված հոդվածում ներկայացվում է, որ ադրբեջանական Տելեգրամյան ալիքները 119 զոհված հայերի լուսանկարներից պատրաստել են պիտակներ (ստիկերներ) և դրանք առցանց վաճառել[28]: Այդ զինվորներից մեկն էլ Արեն Մալաքյանն էր, ում լուսանկարը տարածվել էր Տելեգրամյան հրապարակմամբ՝ դեմքին տեղադրված շուրթերի էմոջիով: Վերնագրում ասվում է.

> «Արեն Մալաքյանը սատկել է 19 տարեկանում, նա գիտեր, որ օտար հողում կռվելն իր մահն է բերելու, ուստի ժամանակից շուտ նա նամակ էր գրել մորը: Եկեք բոլորս նրան լավ օր մաղթենք պարոն Աստվածի մոտ: Հողը վրադ կղանք լինի, Արեն ջան: Ամեն»[29]:

Հեռացված Տելեգրամյան մի հրապարակման մեջ պատկերված է հայ կին զինվոր, ում գերեվարել են, խոշտանգել և մերկացրել, գլխին քող գցել, իսկ տեսանյութում հայկական երաժշտություն է հնչում[30]:

Տելեգրամյան մեկ այլ հրապարակման մեջ որպես iPhone-ի էկրանի արգելափակում

---

[24] Արզու Գեյբուլա և Բահրուզ Սամադով «Ինչպես են ադրբեջանական Տելեգրամյան ալիքները սնում ահաբեկումը», Պատերազմի և խաղաղության լուսաբանման ինստիտուտ (25 հոկտ. 2022թ.), https://iwpr.net/global-voices/how-azerbaijans-telegram-channels-fuel-intimidation.

[25] *Հաղորդագրություն, ՀՀ պաշտպանության նախարարություն* (13 սեպտեմբերի 2022թ.), https://www.mil.am/en/news/11007

[26] @MaidenTower, Telegram (13 սեպտ. 2022թ.),https://t.me/MaidenTower/27781, https://www.dropbox.com/sh/5sk29006upxokc0/AABGElSmugOPdqVhOufK2YIRa?dl=0

[27] @aze_patriotlar, Telegram (23 սեպտ. 2022թ.), https://t.me/aze_patriotlar/2528

[28] Արման Թաթոյան. *Ստեղծվել են հայերի խոշտանգված ու մասնատված մարմինների լուսանկարների ստիկերներ*, Հետք (19 սեպտ. 2022), https://hetq.am/en/article/148458

[29] @aze_patriotlar, Telegram (15 սեպտ. 2022թ.), https://drive.google.com/file/d/1whPRvGNF_a_qpJU9XGihHgRGJG3cm9d/view

[30] @aze_patriotlar, Telegram (13 սեպտ. 2022թ.), https://t.me/aze_patriotlar/2530; @aze_patriotlar Telegram (13 սեպտ. 2022թ.), https://drive.google.com/file/d/18G4PBEDlirDcNnTnLtkyvK0hTjj9tywm/view

ներկայացվում է սպանված հայ կին զինվորի դեմքը: Վերնագիրն ասում է.

> «Որպեսզի հասկանաք, թե որքան է ադմինը (Ադրբեջանի կառավարությունը) զվարճանում հայերի դիակները տեսնելով: Ամեն օր նոր լուսանկարներ եմ տեղադրում պաստառի վրա»[31]:

2022թ. սեպտեմբերի 17-ին տեղադրված նկարում պատկերված են երկու հայ կին զինծառայողներ՝ մատներն ու ոտքերը կտրված և մատները տեղադրված բերանում[32]:

«Սպանված զինվորների ավելի շատ կադրեր» վերնագրով Տելեգրամյան մի հրապարակման մեջ ցուցադրվում է մի տեսանյութ, որտեղ ադրբեջանցի զինվորները քայլում են հայ զինվորների դիակների վրայով[33]:

Տելեգրամյան մեկ այլ հրապարական մեջ երևում է, թե ինչպես է ադրբեջանցին դանակը դնում զոհված զինվորի գլխին՝ պատրաստվելով գլխատել նրան[34]:

Սեպտեմբերի 16-ին Տելեգրամյան հրապարակման մեջ ցույց է տրվում գետնին շարված զոհված հայ զինվորների երկար շարքը: Զինվորներից առնվազն երկուսին մերկացրել էին: Վերնագրում ասվում է.

> «Ադրբեջանական բանակի զինծառայողները նկարահանում են վերջին հատուկ գործողությունը: Բաքվում թեյ խմել ցանկացող հայերի դիակների սարի ստորոտին: Քեռի Մամեդի հրահանգով «Խաչիկի» զգացումը շարունակվում է: Կորուստներ չկան, երդվում եմ Սուրենի ոտքով, որ չար թուրքերը կտրել են»[35]:

Տելեգրամյան հրապարակման մեջ ներկայացվում են երկու սպանված հայ զինվոր, և վերնագրում ասվում է.

> "Gondon fucket a unibrow when he got cunts. And the second one hugged him, fucking in the mouth, how cute it is. Fight, Ashot, fight Peysar! (ցենզուրայից դուրս բառապաշար)"[36]:

Սեպտեմբերի 17-ին հրապարակվել էր հայ զինվորի լուսանկարը՝ հետևյալ վերտառությամբ.

> «Հայ զինվորն առնետի նման թաքնվել էր մեր զինվորից: Բայց քաջ որսորդները

[31] @aze_patriotlar Telegram (13 սեպտ. 2022թ.), https://drive.google.com/file/d/1QBoDFHt7LQfQvZHgmE4au38tcfmQTli_/view.
[32] @zloy_mamed Telegram (17 սեպտ. 2022թ.), https://www.dropbox.com/sh/9mp7vp2owv1na6q/AABHu0AuSbVlP4YK02jOAFVFa?dl=0.
[33] @zloy_mamed Telegram (13 սեպտ. 2022թ.), https://www.dropbox.com/sh/hb5gsy7ujjkztor/AABG4qULypRbxO2shhbEgkWCa?dl=0
[34] @azerbayjanwarcrimes, Telegram (16 սեպտ. 2022թ.), https://t.me/azerbayjanwarcrimes/298
[35] @Gorbagor22, Telegram (16 սեպտ. 2022թ.), https://t.me/Gorbagor22/92656
[36] @zloy_mamed_1915, Telegram (13 սեպտ. 2022թ.), https://t.me/zloy_mamed_1915/112

գտան իրենց որսին, և հիմա նրան սպասվում է ուրախ կարուսել Բաքվի մանեղալի (կրակարան) վրա»[37]:

Սեպտեմբերի 17-ին Տելեգրամում հրապարակված մեկ այլ լուսանկարում պատկերված են գլխատված երկու հայ զինվոր, որի վերնագրում ասվում է.

> «Եվս մեկ լուսանկար սպանված հայ ահաբեկիչների հետ: Հետաքրքիր է, ՀՀ ՊՆ-ն ընդունու՞մ է, որ անձնակազմում մոտ 400 կորուստ ունեն»[38]

2022 թվականի սեպտեմբերի 13-ից 15-ը Ադրբեջանի կողմից գերեվարվել է մոտ երկու տասնյակ հայ: Տելեգրամյան հրապարակումներում երևում է, որ ռազմագերիների աչքերն ու ձեռքերը կապված են[39]: Հրապարակումներից մեկում ցուցադրվում է, թե ինչպես է ադրբեջանցի զինվորը կոխրճում վիրավոր զինվորի ոտքը և հարվածում աչքերը կապած ռազմագերու գլխին[40]: Հայ ռազմագերիների նկատմամբ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի մասին լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս ՃԱԿ (CfTJ)-ի Հայ ռազմագերիների նկատմամբ խոշտանգումների և դաժան վերաբերմունքի մասին վերլուծական զեկույցը և Հայ զինվորի անհետացման մասին լրացուցիչ զեկույցը:

Տելեգրամյան հրապարակումներից մեկը, որը վերնագրված էր «Զանգեզուր» և ներառում էր հետևյալ տեքստը. «Ախ այդ ադրբեջանցիները: 12.09.2022թ.», ցույց է տալիս հայ տղամարդու բռնաբարության պատկերը[41]: Մյուս հրապարակումներում երևում են հայ զինվորները շարժվող բեռնատարում պառկած դեմքով դեպի ներքև՝ կապկպված ձեռքերով, իսկ Տելեգրամի հրապարակումը վերնագրված է. «Հայ գերիների մի փոքր խմբաքանակ գնում է Բաքու»[42]:

Սեպտեմբերի 16-ին «Նոր հայ գերիների նոր կադրեր» վերտառությամբ տեսանյութ է հրապարակվել, որտեղ ռազմագերիները պառկած են դեմքով դեպի ներքև՝ ձեռքերը կապված մեջքի հետևում[43]: Տելեգրամյան մի հրապարակման մեջ ցուցադրվում է հայ զինծառայողը: Հրապարակումը վերնագրված է.

> «Եթե հարազատները ճանաչում են իրենց երեխային, ապա դիմեն անմիջապես Ադրբեջանի նախագահի աշխատակազմին: Ո՛չ Փաշինյանը, ո՛չ էլ որևէ մեկը ձեզ չի

---

[37] @bizimdir_biuro, Telegram (17 սեպտ. 2022թ.), https://t.me/bizimdir_biuro/539, https://www.dropbox.com/sh/iv9sth96hbjz4lh/AABKMYYfVSaFqg9-_W0WqXrRa?dl=0.
[38] @KHACHERUBKA_GORBAGOR Telegram (17 սեպտ. 2022թ.), https://www.dropbox.com/sh/8c1gu63qadz9lnu/AACuTw-X3lYxaScxfcCP9brPa?dl=0
[39] @MaidenTower, Telegram (14 սեպտ. 2022թ.), https://t.me/MaidenTower/27842, https://www.dropbox.com/sh/paztcw06kapxayf/AADJYl0hQfMGDTuZC5z0opmva?dl=0.
[40] @QarabagZengezur, Telegram (14 սեպտ. 2022թ.), https://t.me/QarabagZengezur/1742
[41] @Gorbagor22, Telegram (14 սեպտ. 2022թ.), https://t.me/Gorbagor22/107876
[42] @MaidenTower, Telegram (13 սեպտ. 2022թ.), https://t.me/MaidenTower/27789
[43] @KarabakhRu, Telegram (13 սեպտ. 2022թ,), https://t.me/KarabakhRu/25755, https://www.dropbox.com/sh/ajet1tt4tbst7v5/AAB4ZWc6Ddr-2YcOAEqor0Z6a?dl=0

> օգնի»[44]:

Այս օրինակները ցույց են տալիս, թե ինչպես են ադրբեջանցի զինծառայողներն ու քաղաքացիական անձինք Telegram-ն օգտագործում որպես ալիք՝ փառաբանելու հայերի նկատմամբ բռնություններն ու պատերազմական հանցագործությունները: Ինչպես երևում է վերը ներկայացված վերնագրերից, սարսափելի վայրագությունները, ներառյալ արտադատական մահապատիժներն ու բռնաբարությունները, ծաղրուծանակի են ենթարկվում և ուղեկցվում ռասիստական մեկնաբանություններով:

Թեև Telegram-ը գործում է որպես ադրբեջանցիների շրջանում ատելության խոսքի տարածման հիմնական հարթակ, այնուամենայնիվ, այն սոցիալական ցանցերի միակ հարթակը չէ, որը նպաստում է հայատյացության տարածմանը: YouTube-ում տեղադրված տեսանյութի տակ ադրբեջանցու մեկնաբանության մեջ ասվում է.

> «100 դոլար հայի գլխի համար, ես պատրաստ եմ 10 դոլար վճարել, ֆինանսավորեք Ադրբեջանին, մեզ 200 մլն. դոլար է պետք»[45]:

Twitter-ը ևս մեկ հանրաճանաչ հարթակ է, որից օգտվում են ինչպես նախագահ Ալիևի պես պաշտոնատար անձինք, այնպես էլ սովորական ադրբեջանցի օգտատերերը: 2022 թվականի հոկտեմբերին ադրբեջանցիները քարոզարշավ սկսեցին Twitter-ում՝ օգտագործելով *#ArmenianWarCrimes(Հայաստանի պատերազմական հանցագործությունները)* հեշթեգներ, որտեղ հազարավոր օգտատերեր հրապարակեցին նույն թվիթը[46]:

Ավելին, մինչև 2020 թվականի Ղարաբաղյան պատերազմը, պատերազմի ժամանակ և այսօր թուրքերն ու ադրբեջանցիներն օգտագործում են *#Armenianlies (հայկական սուտ)* հեշթեգը՝ Twitter-ում, Instagram-ում, Facebook-ում և Tiktok-ում հայերի տառապանքներին վերաբերող նյութ տարածելիս: Սա ներառում է Հայոց ցեղասպանությունը, Սումգայիթի ջարդերը և Լաչինի շրջափակումը, որոնց վերաբերյալ պետության կողմից վերահսկվող Caliber.Az լրատվական գործակալությունը նույնպես նսեմացրել է ճգնաժամը՝ Twitter-ում գրելով.

> «Ի դեպ, եկեք չմոռանանք, որ կա «պարենի լուրջ դեֆիցիտ»… Նայեք մրգով լի այս սեղանին, այն ցույց է տալիս, թե որքան «սոված» են նրանք և «ինչպես են տառապում վատ սնվելուց»: Աշխարհում իր տեսակի մեջ միակ կլոունադան

---

[44] @MaidenTower, Telegram (13 սեպտ. 2022թ,), https://t.me/MaidenTower/27796, https://www.dropbox.com/sh/dro81krfyxaahhi/AABLLfPvfEqNw8Jr70S1IIn8a?dl=0

[45] @ambassador_of_the_king, Instagram (28 սեպտ. 2022թ.), https://www.instagram.com/p/CjDdd5uOPJ4/?igshid=YmMyMTA2M2Y%3D, https://www.dropbox.com/sh/4vjsps0qjbn9iao/AACYj1NMIYzq6IOsE4u0y-SJa?dl=0

[46] @Lily_Ray, Twitter (4 հոկտ. 2022թ.), https://twitter.com/lily ray/status/1577292100349091840?s=46&t=6BcVrC546n3_O3qjxbtjlw, https://www.dropbox.com/sh/9frighxjenl7ov9/AACtcpc7UByi8XqMeHYOeAg9a?dl=0

շարունակվում է 🤡 #CaliberAz #facts #ArmenianLies»[47]:

Reddit-ում *r/ArmenianLies* ենթաբաժինը նույնպես հատուկ նվիրված է հետևյալ թեմայի քննարկմանը.

> «Պատմական ստեր … 100 տարվա անիմաստ պահանջներ՝ առանց որևէ ապացույցի, և ստի բացահայտումը, որին փորձում են հավատալ …»[48]:

Նսեմացնելով մարդկային ողբերգությունները, այդ իրադարձությունները սուտ անվանելով՝ այդ ժողովուրդը անմարդկային է դարձնում հայերին երիտասարդ սերունդների մոտ:

Սոցիալական մեդիա հարթակներն օգտագործվում են որպես զենք՝ ինչպես ռասայական ատելություն և վայրագությունների կադրեր տարածելու, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի հայերի վրա Ադրբեջանի կողմից չհրահրված հարձակումների շուրջ նարատիվը փոխելու և Հայաստանի վրա մեղքը բարդելու համար:

Ատելության խոսքի հումանիտար և աշխարհագրական հետևանքները, ինչպես նաև դրա հնարավոր հետևանքները խաղաղության հաստատման հետագա ջանքերի համար

Լաչինի միջանցքի շարունակվող շրջափակումը ցույց է տալիս Ադրբեջանի պետականորեն հովանավորվող ատելության խոսքի հումանիտար հետևանքները: 2022 թվականի դեկտեմբերի 12-ից ի վեր Լաչինի միջանցքը շրջափակված է տասնյակ ադրբեջանցի ցուցարարների կողմից, որոնց, ինչպես ենթադրվում է, աջակցում են Ադրբեջանի իշխանությունները[49]:

Ճանապարհը կապում է Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ, և շրջափակման պատճառով շուրջ 120 000 հայ խաղաղ բնակիչներ զրկվել են առաջին անհրաժեշտության ապրանքների, այդ թվում՝ առողջապահական և դեղորայքից օգտվելու հնարավորությունից: Միայն Կարմիր խաչի միջազգային կոմիտեի և ռուս խաղաղապահների մեքենաներին է թույլատրվում երթևեկել միջանցքով, և նրանց հնարավորությունները բավարար չեն ներսում արգելափակված բնակչության կարիքները բավարարելու համար[50]: Բացի այդ, տարածքը բազմիցս տուժել է գազամատակարարման և էլեկտրամատակարարման

---

[47] @CaliberEnglish, Twitter (3 մարտի 2023թ.), https://twitter.com/CaliberEnglish/status/1633703046646562818, https://www.dropbox.com/sh/5t6vcsy60r18k7v/AABSBUqa1t9m4tB_Zns4BgNFa?dl=0.

[48] «Հայկական ստեր» Reddit, www.reddit.com/r/ArmenianLies/

[49] *Ադրբեջան. Լաչինի միջանցքի շրջափակումը, որը հազարավոր կյանքեր վտանգի տակ է դնում, պետք է անհապաղ վերացվի:* Amnesty (9 փետրվարի 2023թ.) https://www.amnesty.org/en/latest/news/2023/02/azerbaijan-blockade-of-lachin-corridor-putting-thousands-of-lives-in-peril-must-be-immediately-lifted/

[50] *«Լաչինի միջանցքում ստեղծված իրավիճակը պահանջում է անհապաղ գործողություններ», հայտարարում են Հայաստանի հարցով ԵԽԽՎ դիտորդները*, Խորհրդարանական վեհաժողով (24 փետրվարի 2023թ.), https://pace.coe.int/en/news/8986/the-situation-in-the-lachin-corridor-requires-immediate-action-pace-monitors-for-armenia-say?fbclid=IwAR243W2cTD1KImHC5ftqn8GYsQ2juCk7p5Tv160UGepJSZa2MX0bFf-yii4

խափանումներից, ինչի հետևանքով փակվել են դպրոցները, իսկ մարդիկ կորցրել իրենց աշխատանքը: Շրջափակման հետևանքով սննդամթերքի, բժշկական ծառայությունների, գազի և էլեկտրաէներգիայի պակասը և բացակայությունը և դպրոցների փակումը խորացնում են հումանիտար ճգնաժամը և ոտնահարում մարդու հիմնարար իրավունքները:

Ի պատասխան շարունակվող շրջափակմանը, Արդարադատության միջազգային դատարանն իր փետրվարի 22-ի՝ միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ որոշմամբ կոչ է անում Ադրբեջանին «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայով ստանձնած իր պարտավորությունների համաձայն ձեռնարկել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները՝ ապահովելու մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների անարգել տեղաշարժը Լաչինի միջանցքով երկու ուղղությամբ»[51]:

Արձագանքելով միջանկյալ միջոց կիրառելու վերաբերյալ որոշմանը՝ Նիդերլանդներում Ադրբեջանի Հանրապետության դեսպան Ռահման Մուստաֆաևը փետրվարի 23-ին թվիթերյան իր էջում գրել է,

> «Էկո ակցիայի 74-րդ օրը: @CIJ_ICJ-ի որոշմամբ ոգեշնչված՝ ադրբեջանցի ակտիվիստներն ու ՀԿ-ները շարունակում են իրենց խաղաղ ակցիան: Ադրբեջանը շարունակում է ձեռնարկել ԻՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹՅԱՆ ՏԱԿ ԵՂԱԾ բոլոր միջոցները՝ ապահովելու մարդկանց, տրանսպորտային միջոցների և բեռների անարգել տեղաշարժը Լաչինի միջանցքով երկու ուղղությամբ»[52]:

Մուստաֆաևի թվիթերյան այս գրառումը վկայում է, թե ինչպես է Ադրբեջանը փորձում ցուցարարներին ներկայացնել որպես ազնիվ միջնորդ բնապահպանական խնդիրների լուծման գործում՝ միաժամանակ իր վրայից հանելով կառավարության կողմից ստեղծված հումանիտար ճգնաժամի համար պատասխանատվությունը:

Հումանիտար ճգնաժամի հետագա ապալեգիտիմացման նպատակով Ադրբեջանի պետական պաշտոնյաները վատաբանում են իրենց անհեթեթ կեղծ նարատիվները մերժողներին: Ադրբեջանի խորհրդարանի պատգամավոր Թուրալ Գյանջալիևն Արցախի նախկին փոխնախարար Ռուբեն Վարդանյանին անվանել է «հանցագործ խաբեբա», որին «ուղղակի մերկացրել է @BBCHARDtalk-ը «հումանիտար աղետի», Ադրբեջանի Ղարաբաղի «շրջափակման» մասին իր ստերի և շինծու հեքիաթների համար»: Չկարողանալով վերահսկել այս միջազգային եթերի նարատիվն ու ընդունելությունը՝ Գյանջալիևը դիմել էր բանավոր վիրավորանքների՝ շարունակելով, որ «ամենավատն այն է, որ @Europarl_EN-ում Եվրախորհրդարանի որոշ պատգամավորների հեշտությամբ հիմարացնում են, և նրանք

[51] Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիայի կիրառում (Հայաստանն ընդդեմ Ադրբեջանի), միջանկյալ միջոցներ կիրառելու պահանջ, 2023, ԱՄԴ No. 180, ¶ 10 (փետրվարի 22)

[52] @rahman26Ø9m, Twitter (23 փետր. 2023թ.), https://twitter.com/rahman2609m/status/1628677810469408772, https://www.dropbox.com/sh/myxjbd4u5ppwwd0/AADZGs2pS6H-mNK8lJ2a2jg6a?dl=0

աջակցում են այդ սրիկային [Վարդանյանին][53]»: «Հումանիտար աղետը» չակերտների մեջ վերցնելը ժխտում է ճգնաժամի իրողությունը, և հատկապես հայերի նկատմամբ դաժան վերաբերմունքի դեմ հանդես եկողների թիրախավորումը ծնում է միջազգային հանրության դժկամությունը հանդես գալ անարդարության դեմ:

Թուրալ Գյանջալիևը պահանջում էր նաև, որ «#Հայաստանը պետք է դադարեցնի խեղաթյուրել #Լաչինում խաղաղ ցույցի իրական նպատակը» և «զերծ մնա միջազգային հանրությանը իբր տեղի ունեցող «հումանիտար» խնդիրների մասին ստերով և կեղծ պատմություններով խաբելուց»[54]: Գյանջալիևը խորհրդարանում ներկայացնում էր «Խանքենդին» (Լեռնային Ղարաբաղի մայրաքաղաք Ստեփանակերտի ադրբեջանական անվանումը): Նա այնուհետև պնդում էր, որ «այս նեո-հայկական ֆաշիզմը, որը «մեր տարածաշրջանը ներքաշում է աղետի մեջ, պետք է կանգնեցվի»: Գյանջալիևը ցույց է տալիս, թե ինչպես է Ադրբեջանի կառավարությունը շեղում և հայերին դարձնում անմարդկային՝ սպառնալով նրանց ենթարկվել[55]:

Ադրբեջանցի մեկ այլ նշանավոր քաղաքական գործիչ Հիքմեթ Հաջիևը, ով նախագահ Ալիևի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդականն է, նմանատիպ արհամարհական մեկնաբանություններ է արել Twitter-ի իր էջում: Չնայած հումանիտար ճգնաժամի վերաբերյալ ապացույցներին, նա պնդում է, որ «ճանապարհը բաց է քաղաքացիական/մարդասիրական նպատակների համար» և պահանջում է «դադարեցնել շրջափակման քարոզչությունը»[56]: Նա Twitter-ում գրել է նաև. «Փոխանցել եմ Լաչին-Խանքենդի ճանապարհի խաչմերուկում խաղաղ ցույց անող Ադրբեջանի քաղաքացիական հասարակության արդարացի մտահոգությունը օգտակար հանածոների հանքավայրերի ապօրինի շահագործման և դրան հետևող բնապահպանական վնասների կապակցությամբ: Ենթադրյալ «շրջափակման» մասին Հայաստանի պնդումները անհիմն են և սև քարոզչության ապարդյուն փորձ»[57]:

Հաջիևը կրկին սուտ պնդում է, թե իբր Հայաստանը շրջափակումն օգտագործում է որպես «քարոզչություն»: Լինելով Ադրբեջանի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդական՝ նա օգտագործում է «քաղաքացիական հասարակություն» և «բնապահպանական վնասներ» բառերը՝ փորձելով Ադրբեջանը ներկայացնել որպես միջազգային քաղաքականության առումով առաջադեմ պետություն:

Հաջիևի և Գյանջալիևի այս ձևակերպումները, և հատկապես բնապահպանական

[53] @TGanjaliyev, Twitter (23 հունվ. 2023թ.), https://twitter.com/TGanjaliyev/status/1617634483020386304, https://www.dropbox.com/sh/4vb9w55rv8j2qnb/AAD9WkBR2XgKhkGEllfnLA81a?dl=0
[54] @TGanjaliyev, Twitter (25 հունվ. 2023թ.), https://twitter.com/TGanjaliyev/status/1618304908515758080, https://www.dropbox.com/sh/wnf0gi1auopnu41/AAD4egoTm9TUI1geKokrF4t4a?dl=0
[55] @TGanjaliyev, Twitter (26 հունվ. 2023թ.), https://twitter.com/TGanjaliyev/status/1618751477270577152, https://www.dropbox.com/sh/1egey1ysmx4bs4i/AAAw1qE0KstNhSfW7kwnIllka?dl=0
[56] @HimketHajiyev, Twitter (23 դեկտ. 2022թ.), https://twitter.com/HikmetHajiyev/status/1606521998548557824, https://www.dropbox.com/sh/pzb7ewquk3d0ald/AAC-11PjiKa7hHX1bOlZmtF4a?dl=0
[57] @HimketHajiyev, Twitter (22 դեկտ. 2022թ.), https://twitter.com/HikmetHajiyev/status/1605974855819464706, https://www.dropbox.com/sh/li6howe5dlkiqlu/AAAC3dbXD10PAeNDahyPgHBka?dl=0

արդարության սկզբունքի ոչ անկեղծ կիրառումը, որն այսօր լուրջ խնդիր է գլոբալ քաղաքականության մեջ, նպատակ ունեն «էկոլոգիական աստառ տալ» շրջափակմանը՝ փորձելով այն ներկայացնել որպես շրջակա միջավայրի պաշտպանության խնդիր, այլ ոչ թե Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի էթնիկ զտում:

Բնապահպանական հռետորաբանությունը, սակայն, հակասում է Ադրբեջանի պետական պաշտոնյաների գործողություններին, որոնք մշտապես ցուցադրում են Ադրբեջանի հարստությունն ու միջազգային աջակցությունն իրենց նավթի շնորհիվ՝ օգտագործելով երկակի մոտեցում՝ դրանք հակադրելու Հայաստանում նավթի բացակայության հետ: Օրինակ՝ Գերմանիայում Ադրբեջանի դեսպան Նասիմի Աղաևը Twitter-ում կատարել էր հետևյալ գրառումը.

> «Եթե հայամետ քաղաքական գործիչները և լրատվամիջոցները դժգոհ են, որ #Ադրբեջանը մեծ քանակությամբ բնական գազ է մատակարարում Եվրոպա, տաքացնում անթիվ տներ և օգնում ԵՄ բարգավաճմանը, ապա նրանք պետք է ընտրեն հնագույն հայկական գազը և կառուցեն հնագույն հայկական խողովակաշար… Վայ, սպասեք, Հայաստանը գազ չունի 😞 »[58]:

Հայերին «տխուր» էմոջիներով ծաղրելուց բացի նա առաջին հերթին կասկածի տակ է դնում Հայաստանի պատմությունը՝ կարծելով, որ հայերն անարդարացիորեն են իրենց արտեֆակտները «հնագույն» համարում: Այնուհետև Աղաևը շարունակում է՝ նշելով, որ.

> «Հայկական լոբբին և նրա դաշնակիցները պետք է իրենց հարց տան, թե ինչու են ադրբեջանական նավթատար և գազատար խողովակաշարերը շրջանցում Հայաստանը, այ ոչ թե նվնվան, # Ադրբեջան-ԵՄ գործընկերությունը շուտով էլ ավելի կուժեղանա»[59]:

Փորձելով հայերին ներկայացնել որպես ագրեսոր տարածաշրջանում, նա այնուհետև գալիս է այն եզրակացության, որ Հայաստանի և ԵՄ-ի միջև գործընկերության ենթադրյալ բացակայությունը «պայմանավորված է Հայաստանի կողմից Ադրբեջանի տարածքների բարբարոսական օկուպացիայով»:

2023 թվականի մարտի 2-ին Թուրալ Գյանջալևը գրառում էր կատարել Twitter-ում.

> «Շատ կարևոր հանրային լսումներ են անցկացվում այժմ Ադրբեջանի խորհրդարանում՝ Հաղթահարել լեռները: Խաղաղ և արդար վերադարձ Արևմտյան Ադրբեջան»:

---

[58] @NasimiAghayev, Twitter (4 հունվ. 2023թ.), https://twitter.com/NasimiAghayev/status/1610642047895048194, https://www.dropbox.com/sh/ejgxcemr9urtxop/AACIiwVtVrC0OKb6X52gQnHGa?dl=0

[59] @NasimiAghayev, Twitter (4 հունվ. 2023թ), https://twitter.com/NasimiAghayev/status/1610706852043522048, https://www.dropbox.com/sh/zz0ntxk54200mu3/AAA9hmIsJ4JfaUDIa3dC6Raia?dl=0

> Բոլոր ադրբեջանցիների անօտարելի իրավունքն է խաղաղ ճանապարհով վերադառնալ իրենց տները (այսօրվա Հայաստանում)»[60]:

«Արևմտյան Ադրբեջանը», ինչպես օգտագործվում է Ադրբեջանի կառավարության կողմից, իռեդենտիստական քաղաքական հասկացություն է, որը վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը: Դա կեղծ և ապակողմնորոշիչ վկայակոչում է, որն արհեստականորեն ստեղծվել է պնդելու համար, որ ժամանակակից Հայաստանի տարածքն այն հողերն են, որոնք ժամանակին պատկանել են ադրբեջանցիներին: 2010 թվականից Իլհամ Ալիևը հավանություն է տվել հայեցակարգին և պարբերաբար հիշատակում է «Իրևանը», որը Հայաստանի մայրաքաղաք Երևանն է, «Գյոյչան» (Սևանա լիճը) և «Զանգեզուրը», որը Հայաստանի հարավային շրջանն է, որպես նախկին և ապագա «ադրբեջանական հողեր»: Իլհամ Ալիևը 2022 թվականի դեկտեմբերին իր երդմնակալության ելույթում ասել է.

> «Ներկայիս Հայաստանը մեր հողն է: Երբ ես նախկինում բազմիցս ասել եմ դա, նրանք փորձել են առարկել և պնդել, որ ես տարածքային պահանջներ ունեմ: Ես դա ասում եմ որպես պատմական փաստ: Եթե ինչ-որ մեկը կարող է այլ տեսություն հիմնավորել, թող խոսի»[61]:

2023 թ. մարտի 19-ին Գերմանիայում Ադրբեջանի դեսպանը տեղադրել էր Հայաստանի Հանրապետության քարտեզը՝ սուտ հայտարարելով, որ «թյուրքական տեղանունները» ջնջվել և փոխարինվել են հայկական անուններով[62]:

2023 թվականի մարտի 18-ին Իլհամ Ալիևը բոցավառվող խարույկի առջև կատարել է իր հետևյալ սպառնալից հայտարարությունն իր թվիթերյան էջում՝ բռունցքը թափահարելով և մատնացույց անելով, իսկ հետին պլանում հնչում էր ազդեցուցիչ երաժշտություն.

> «Կա մի պայման, որպեսզի նրանք կարողանան հանգիստ ապրել 29 000 քառ. կմ տարածքում. Հայաստանը պետք է ընդունի մեր պայմանները … Մենք աշխարհին ցույց ենք տալիս, թե որքան ուխտադրուժ և անշնորհակալ են նրանք: Հիմա նրանք նոր տեր են փնտրում, չգիտեն, թե ում ոտքերն ընկնեն: Կա մի պայման, որպեսզի նրանք կարողանան հանգիստ ապրել 29 000 քառ. կմ տարածքում. Հայաստանը պետք է ընդունի մեր պայմանները՝ պաշտոնապես ճանաչի Ղարաբաղը Ադրբեջանի մաս, կնքի խաղաղության պայմանագիր և մեր պայմաններով կատարի սահմանազատման աշխատանքները: Միայն այս դեպքում նրանք կարող են հանգիստ ապրել 29 000 քառակուսի կիլոմետր տարածքում, ինչը նրանց ուզածն է: Եթե Հայաստանը չճանաչի մեր տարածքային ամբողջականությունը, մենք չենք ճանաչի նրանց տարածքային ամբողջականությունը: Հայաստանը և նրա

[60] @TGanjaliyev, Twitter (2 մար. 2023թ.), https://twitter.com/TGanjaliyev/status/1631554342921678849, https://www.dropbox.com/sh/qianpiq0hqztqlk/AAApZ_4hbwJT5XZo0PFzxf-Ha?dl=0
[61] Իլհամ Ալիևը ծանոթացել է Արևմտյան Ադրբեջանի համայնքի վարչական շենքում ստեղծված պայմաններին. Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիև (24 դեկտ. 2022թ.), https://president.az/en/articles/view/58330
[62] Հավելված

թիկունքում կանգնած երեսպաշտ երկրները պետք է իմանան, թե ինչ արդյունք է լինելու: Նրանք պետք է իմանան, որ մեր դեմ ոչ մի կեղտոտ ծրագիր չի աշխատի»[63]:

Նախագահ Ալիևի այս վերջին հայտարարությունը բնորոշ է ներկայիս վարչակազմի՝ Հայաստանին, նրա ղեկավարությանը, հայ ժողովրդին և ԱՄԴ-ին նսեմացնելու, ահաբեկելու և սպառնալու քաղաքականությանը: Լաչինի միջանցքի շրջափակումն ընդամենը մեկն է այն բազմաթիվ օրինակներից, թե ինչպես է Ադրբեջանն ակտիվորեն իրականացնում էթնիկ զտումների իր քաղաքականությունը, ինչպես նաև համակարգված կերպով առաջ շարժվում Հայաստանի Հանրապետության տարածքի սահմաններում:

Որպես Ադրբեջանի էթնիկ զտումների քաղաքականության դրսևորում՝ Լաչինի միջանցքի շրջափակումը ռասայական դրդապատճառներ ունի: Իր որոշման մեջ Արդարադատության միջազգային դատարանը վկայակոչում է «Ռասայական խտրականության բոլոր ձևերի վերացման մասին» միջազգային կոնվենցիայի (CERD) 5-րդ հոդվածը, որի ստորագրող կողմ է հանդիսանում Ադրբեջանը.

> «5-րդ հոդվածի համաձայն՝ մասնակից պետությունները պարտավորվում են երաշխավորել օրենքի առջև հավասարության յուրաքանչյուրի իրավունքը՝ օգտվելով իրավունքների անսպառ ցանկից, մասնավորապես՝ «պետության սահմաններում ազատ տեղաշարժվելու և բնակվելու իրավունքը», «ցանկացած երկրից, ներառյալ սեփական երկրից հեռանալու և իր երկիր վերադառնալու իրավունքը» և «հանրային առողջության, բժշկական օգնության, սոցիալական ապահովության և սոցիալական ծառայություններից օգտվելու իրավունքը»[64]:

Իր ճեպազրույցում ԱՄԴ-ն նշում է, որ Ադրբեջանի կողմից Լաչինի միջանցքի շարունակվող շրջափակումը Կոնվենցիայի 5-րդ հոդվածի ակնհայտ խախտում է: Բացի այդ, թեև շրջափակումն ինքնին նշանակում է չպաշտպանել Լեռնային Ղարաբաղում հայ բնակչության իրավունքները, կարևոր է նշել, որ զարգացող հումանիտար ճգնաժամը հենց այնպես տեղի չի ունեցել: 2022 թվականի օգոստոսին JAM News-ին տված հարցազրույցում նախագահ Ալիևը խոսել է Լաչինի միջանցքում ապրող բռնի տեղահանված հայերի մասին և ասել.

> «Միգուցե այնտեղ բնակվող հայերը, ովքեր եկել են Սիրիայից, Լիբանանից, դա չգիտեն, բայց Հայաստանի ղեկավարությունն այդ մասին քաջատեղյակ է: Մենք հաղորդագրություններ ենք ստանում այդ տարածքից, որ նրանք չեն հեռանալու: Հուսով եմ, նրանք նորից չեն փորձի մեր համբերությունը: Թող իրենց կամքով հեռանան: Մեզ չի հետաքրքրում, թե ուր կգնան»[65]:

---

[63] *Իլհամ Ալիևը և առաջին տիկին Մեհրիբան Ալիևան այցելել էին Թարթառի շրջան*. Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիև (18 մարտի 2023թ.), https://president.az/en/articles/view/59208

[64] *Ծանոթագրությունը վերևում* 41, ¶ 36

[65] *«Ղարաբաղում բնակվող հայերը ո՛չ կարգավիճակ կունենան, ո՛չ անկախություն». Իլհամ Ալիև,* JAM news (13 օգոստ, 2022թ.), https://jam-news.net/armenians-living-in-karabakh-will-have-neither-special-status-nor-independence-ilham-aliyev/

Անտեսելով դատարանի օբյեկտիվ բնույթը՝ նախագահ Ալիևը 2023թ. մարտի 16-ին կոնկրետ մեկնաբանություն է արել՝ նշելով.

> «[Եվրախորհրդարանի կողմից մարտի 15-ին] այս ձևով քննարկման դնելը, անկասկած, վկայում է Հայաստանից և հայկական սփյուռքից ծագման մասին, որը վաղուց արդեն Եվրոպայի քաղցկեղային ուռուցքն է»[66]:

Եվրախորհրդարանի որոշումը երրորդ կողմի ազդեցության արդյունք հայտարարելը նսեմացնում է նրա վարչական ուժը, և նշելով, որ բանաձևն ընդամենը հայ համայնքի խարդախության արդյունք է, Ալիևը մատնանշում է այդ որոշման պահանջը կատարելու իր կառավարության մտադրության իսպառ բացակայությունը: Սակայն առավել ուշագրավ է հայերին քաղցկեղի հետ հավասարեցնելը. ամենուրեք վախենում են քաղցկեղից, և այն վիրահատական ճանապարհով հեռացնում են, ուստի հայկական սփյուռքին «քաղցկեղային ուռուցք» անվանելն ընդգծում է Ալիևի ռեժիմի մտադրությունը՝ հեռացնել «հայեր» կոչվող այդ քայքայվող զանգվածը և էթնիկ զտումներ իրականացնել Ադրբեջանի ինքնապահպանման քողի տակ:

Այս հայտարարությունները ցույց են տալիս այդ տարածքում բնակվող հայերին վտարելու նախագահ Ալիևի և Ադրբեջանի ծրագրերը՝ աստիճանաբար նախապատրաստվելով շրջափակման: Ռասայական ատելության քաղաքական գաղափարախոսությունը խթանում է շարունակական գործողությունները, որոնք վտանգում են հայերի կենսապահովման միջոցներն ու մարդու հիմնարար իրավունքները: Անզուսպորեն հայտարարելով, որ «ինտեգրվելուց հետո #Ադրբեջանի Ղարաբաղի շրջանում ապրող հայերը կօգտվեն նույն իրավունքներից ու ազատություններից, ինչ Ադրբեջանի մյուս բոլոր քաղաքացիները», Ադրբեջանի պետական պաշտոնյաները նկատի ունեն, որ հայերն այլ տարբերակ չունեն, քան կծկվելը (կռանալը), քանի որ կառավարելու նրանց կարողությունն ընդամենը ֆարս է[67]:

Քանի որ ռասայական ատելությունը ադրբեջանցի երեխաներին սովորեցնում են շատ փոքր տարիքից, Ադրբեջանում պետական մակարդակով հովանավորվող հայատյացությունը էական խոչընդոտ է հանդիսանում խաղաղաշինությանն ուղղված ներկայիս և ապագա ջանքերի համար: Ադրբեջանը որևէ նշան ցույց չի տվել, որ կհետևեն Արդարադատության միջազգային դատարանի միջանկյալ միջոցներ կիրառելու վերաբերյալ որոշումներին կամ զսպեն ատելության խոսքը: Ընդհակառակը, նրանք սրում են լարվածությունը՝ ապագա սերունդների համար պետության կողմից հովանավորվող ատելության խոսքը տարածելու և Հայաստանի ու հայերի գոյության սպառնալիքի միջոցով:

Եզրակացություն. ՏԱԳՆԱՊԱԼԻ ԻՐԱՎԻՃԱԿ

---

[66] «Ադրբեջանի խորհրդարանը Եվրախորհրդարանի բանաձևը դատապարտող հայտարարություն է ընդունել», Apa.az (16 մարտ 2023թ.), https://apa.az/en/domestic-policy/azerbaijani-parliament-issues-protest-statement-regarding-european-parliaments-resolution-398952

[67] @NasimiAghayev, Twitter (5 հունվ. 2023թ.), https://twitter.com/NasimiAghayev/status/1611010334244089857, https://www.dropbox.com/sh/yzp2yi1go9mfu3p/AACVRyPw7asANx17C8YWLtdAa?dl=0

Ալիևի վարչակարգի կողմից հրահրվող ատելության խոսքը պետք է ճանաչել և դատապարտել նրա համար, որ դա տարածաշրջանում ծայրահեղ ռասայական և էթնիկական անհանդուրժողականության և բռնության մշակույթ քարոզելու փորձ է: Պետականորեն քարոզվող ատելության խոսքը դատապարտելու և կանգնեցնելու համար անհրաժեշտ է միջազգային հանրության միասնական և արդյունավետ արձագանքը:

Թիրախի տակ հայտնված, ռմբակոծությունների, հրետակոծությունների, խեղումների և սպանությունների ենթարկված Լեռնային Ղարաբաղում բնակվող հայերն այժմ բանտարկված են իրենց սեփական հողում, չեն կարող որևէ տեղ մեկնել և չունեն արտաքին աշխարհի հետ կապվելու որևէ ճանապահ: Տարածաշրջանի քաղաքացիական բնակչությունը կազմում է 120 000 մարդ. չունեն ո՛չ բանակ, ո՛չ էլ զենք ինքնապաշտպանության համար: Հաշված օրերի ընթացքում ադրբեջանցի զինվորականները կարող են հայերին վտարել իրենց հայրենի հողից: Սա գաղտնիք չէ և պետք է հատկապես շեշտել:

Հայաստանի Հանրապետությունը գտվնում է լայնամասշտաբ ներխուժման վտանգի տակ: 2022 թվականի սեպտեմբերից, երբ Ադրբեջանը լայնածավալ հարձակում գործեց Հայաստանի վրա և ռազմական ճանապարհով հատեց նրա սահմանները[68], ադրբեջանցի զինուժը շարունակում էր զորքեր կուտակել և առաջ շարժվել դեպի Հայաստանի տարածքի խորքը: Ադրբեջանցիներն արդեն ներթափանցել են Հայաստանի սահմանները, և պետության ինքնիշխանությունը վտանգված է:

Չնայած Արդարադատության միջազգային դատարանի որոշմանը՝ նախագահ Ալիևի ատելության և անհանդուրժողականության հռետորաբանությունը շարունակվում է: Եթե միջազգային հանրությունը գործնական քայլեր չձեռնարկի Ալիևի ռեժիմին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ, Ադրբեջանի կառավարությունը կշարունակի վարել ատելության, բռնության և շրջափակման իր քաղաքականությունը: Այս զեկույցը կոչ է անում Միացյալ Նահանգներին և Եվրամիությանը կիրառել այնպիսի պատժամիջոցներ, ինչպիսիք են Մագնիտսկու գլոբալ պատժամիջոցները, ինչպես նաև կիրառել Մարդասիրական օգնության միջանցքի մասին օրենքը՝ հստակ ազդանշան ուղարկելու Ադրբեջանին և մնացած միջազգային հանրությանը, որ Ալիևի ռեժիմի գործողությունները չեն կարող և չեն հանդուրժվի: Ժամանակն է գործելու նախքան վերահաս ցեղասպանությունն իրականություն դառնալը:

[68] Սիմոն Մաղաքյան, *ԱՄՆ-ը կարող է անսպասելի որոշիչ գործոն դառնալ Հայաստանի ապագայի համար:* TIME (6 հոկտեմբերի 2022թ.), https://time.com/6219263/armenia-azerbaijan-us-involvement/

Հավելված



[69]

Նկար 2. Թյուրքական տեղանունների աշխարհագրական բաշխումը (բոլոր տեղանունների տոկոսային հարաբերությունը)

[69] @NasimiAghayev, Twitter (19 մարտի 2023թ.), https://twitter.com/NasimiAghayev/status/1637518247724449794?s=20, https://www.dropbox.com/sh/4s0fly3acod7py5/AACmw03-_Ipx5g8if_XBiy4ga?dl=0